ԿԱՐԾԻՔ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼՅՈՇԱՅԻ ՇԻՐԻՆՅԱՆԻ «ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ (V-XV ԴԴ.) (ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ)» Թ.00.05-ԿՐՈՆԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Արուսյակ Ալյոշայի Շիրինյանի

(ազգանուն,անուն,հայրանուն)

«ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ (V-XV ԴԴ.) (ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ)»

(թեմայի անվանումը)

վերտառությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

1. Աշխատանքի արդիականության հիմնավորումը և գրականության վերլուծությունը

Արուսյակ Ալյոշայի Շիրինյանի «Պատմական ժամանակի ընկալումը հայ եկեղեցական մատենագրության մեջ (կրոնագիտական վերլուծություն) վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը հայագիտության մեջ՝ կրոնափիլիսոփայական ավանդույթների լուսաբանման, ժամանակի պատմամշակութային առանձնահատկությունների և աղբյուրագիտական դիտարկումների ու մեթոդաբանական նորովի վերլուծությունների, ինչպես նաև միջգիտակարգային բազմոլորտ ուսումնասիրության ու արժևորման ծիրից, նախադեպը չունեցող հետազոտություն է: Հրապարակային պաշտպանության ներկայացված սույն ատենախոսությունն ունի պատմագիտական, բնագրագիտական, կրոնագիտական, փիլիսոփայական և մեթոդաբանական արդիական նշանակություն: Այն ներկայացնում է առաջին համապարփակ ուսումնասիրությունը, որով հայ միջնադարյան մտածողների ժառանգությունը քննվում է կրոնափիլիսոփայական և հերմենևտիկ դիտակետից: Այստեղ քննարկված և հիմնավորված տեսակետները միանգամայն նոր մոտեցումներ են բովանդակում աստվածաբանական և փիլիսոփայական ուսումնասիրությունների

վերլուծական աշխատանքների համատեքստում:

Մեթոդաբանական նոր ըմբռնումների ուրվագծի վերաբերյալ ատենախոսական ուսումնասիրությունն իրենից ներկայացնում է առաջին փորձը և լայնածավալ ու տարաբնույթ սկզբնաղբյուրների ու գրականության վրա հիմնված գիտական վերլուծությունը: Հեղինակն օգտագործել է հիմնական արժեքավոր սկզբնաղբյուրները և համապատասխան գրականությունը:

Կատարելով բովանդակային ուսումնասիրություն՝ Արուսյակ Ալյոշայի Շիրինյանը համապարփակ ներկայացրել է քննարկվող ժամանակաշրջանի մատենագիրների տեսակետները, բնագրային առանձնահատկությունները և առաջադրել իր տեսակետները:

Հիմնախնդիրների պարզաբանման տեսանկյունից ներկայացված ատենախոսությունն ունի շատ կարևոր և արդիական նշանակություն՝ արձանագրելով տեսական և գործնական նշանակությունը: Այն կոչված է սկզբնաղբյուրների, թեմայի վերաբերյալ ուսումնասիրությունների, բնագրային, փաստական տվյալների, պատմագիտական, կրոնափիլիսոփայական և մեթոդաբանական հետազոտությունների շրջագծում ներկայացնելու **միջնադարյան հայ ականավոր մտածողների երկերը՝ պատմական ժամանակի** ուսումնասիրման, կրոնափիլիսոփայական առնչակից կարգույթների և ծիսական առանցքային նշանակության բնագրերի լուսաբանման ծիրից՝ հիմք ընդունելով արդի մեթոդաբանությունն ու քննադատական վերլուծությունը, կոնտենտ վերլուծությունը, ինչպես նաև մեկնաբանական, վերլուծական նոր եղանակները, այսօրվա գիտական հանրույթին ներկայացվող համապատասխան նոր գործիքակազմը, ակադեմիական գրագիտության և բարեվարքության կանոնները. տեղեկատվական նորագույն տվյալներն ու թվային շտեմարանների գործածումը նպատակ ունեն առավելապես ընդգծելու հետազոտության արդիականությունն ու կարևորությունը:

Այսու՝ առանցքային խնդիրների պատմական զարգացման դիտարկումներն ու կրոնափիլիսոփայական անհրաժեշտ քննարկումները՝ ժամանակակից տեխնոլոգիական լուծումների զուգորդմամբ, արդիական են և պահանջում են այսօրեական գիտական չափորոշիչներին համահունչ լուծումներ ու համակողմանի վերլուծություններ: Այս առումով թեման արդիական է, ներառում է կարևոր հարցերի դիտարկումներ և նոր առաջադրումներ ու մոտեցումներ թելադրում:

Ներածության մեջ Արուսյակ Ալյոշայի Շիրինյանն առանձնակի շեշտադրել է

հետազոտության հիմնախնդիրներն ու հետազոտական հարցը, այն է՝ ներկայացնել **ժամանակի փիլիսոփայական և աստվածաբանական հայեցակարգերին ու մեկնաբանություններին նվիրված գիտական գրականության համակարգված տեսություն՝ նպատակ ունենալով վերհանել առանցքային թեմատիկ ուղղությունները, մեթոդաբանական մոտեցումները և արդի հետազոտական քննարկումները՝** այսկերպ ապահովելով **ժամանակի հայեցակարգերի** պատմական և կրոնափիլիսոփայական շարունակականությունը:

Հետազոտության քննարկած և հիմնավորած տեսակետները, միանգամայն սեփական վերլուծությունները նոր մոտեցումներ են բովանդակում հայ միջնադարյան մատենագրության ուսումնասիրման շրջագծում և նոր էջեր բացում ինչպես մեկնողական գրականության և աստվածաբանական ուսումնասիրությունների վերլուծական աշխատանքների, այնպես էլ փիլիսոփայական հետազոտությունների համատեքստում: Առնչակից հիմնախնդիրների լուսաբանումը ևս զուգորդվել է սկզբնաղբյուրների գործածմամբ, ինչպես նաև հետազոտողների բազմակողմանի վերլուծական հետազոտությունների քննմամբ: Այսպես՝ աշխատանքի շարադրման համար օգտագործվել են սկզբնաղբյուրներ և նպատակային ուսումնասիրություններ:

2. Ատենախոսության կառուցվածքը: Ներածության մեջ պատշաճորեն և գիտական ձևակերպումներով հիմնավորված են թեմայի արդիականությունն ու կարևորությունը, նորույթը, նպատակն ու խնդիրները, մեթոդաբանական հիմքերը, գիտագործնական նշանակությունը, սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքը, որոնք հստակորեն ներկայացնում են ամբողջ ուսումնասիրությունը:

Ատենախոսության կառուցվածքն արտացոլում է հետազոտության գլխավոր նպատակի համապարփակ ընդգրկումը: Համապատասխանաբար օգտագործվել են թեմայի վերաբերյալ և առնչակից ուսումնասիրությունները՝ համապատասխան նյութի դասակարգման և համեմատական եղանակով:

Թեկնածուական ատենախոսությունը կազմված է *ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից* և *օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից*:

Առաջին գլուխը՝ «Պատմական ժամանակի հասկացության ծագումը և զարգացումը» վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից, որոնցում ատենախոսը քննարկել է վաղ

փիլիսոփայության, հուդայականության և հայրաբանության մեջ ժամանակի ընկալման ձևավորմանը և զարգացման պատմությանը: Ներկայացված է առկա ուսումնասիրությունների կարևորությունը, ինչպես նաև մինչ այսօր կատարված աշխատանքները՝ բնագրային և վերլուծական ծիրից ներս: Առաջին ենթագլխում քննվել են ժամանակավարության մոդելները անտիկ շրջանում, առնչակից կարևորագույն խնդիրներ և հիմնահարցեր՝ համակարգային մեթոդաբանական համատեքստում: Երկրորդ ենթագլխի շրջանակներում ատենախոսը վերլուծության է ենթարկել ժամանակավարության մոդելները հուդայականության մեջ և ներկայացրել ժամանակի փուլային ընկալումները նոր մեթոդաբանությամբ: Երրորդ ենթագլուխն ամփոփում է ժամանակավարության մոդելները Եկեղեցու հայրերի ժառանգության մեջ: Այսպիսով՝ հեղինակը համապարփակ եղանակով ներկայացրել է ժամանակավարության մոդելների ընդգրկունությունը, պատմական զարգացման ընթացքը, ուսումնասիրողների տեսակետները և առաջադրել իր հետազոտական վերլուծություններն ու եզրակացությունները:

Երկրորդ գլխում՝ «Պատմական ժամանակի հասկացության վերլուծությունը V-VII դարերի հայ եկեղեցական մատենագրության մեջ» խորագրով, ատենախոսը ներկայացնում է ժամանակի գծային ընկալման ձևավորումն ու զարգացումը V-VII դարերում: Ատենախոսության առանցքային բաժինը ներկայացնում են այս գլխում քննվող հայ եկեղեցական մատենագիրներն ու նրանց գործերը: Կարևորվում են հարցի առնչությամբ ներկայացված մեթոդաբանական ուսումնասիրություններն ու նոր տեսակետները: Սույն բաժնում անդրադարձ է կատարվել հայ մատենագիրների ներկայացրած պատմական ժամանակի ըմբռնումներին և պատմական տվյալներին, ուստի դրանք քննված են առանցքային կերպով՝ աշխատասիրության արդիականությունը առավել հիմնավոր ներկայացնելու տեսանկյունից:

Երրորդ գլուխը՝ «Պատմական ժամանակի հասկացության վերլուծությունը VIII-XI դարերի հայ մատենագրության մեջ» վերտառությամբ, բաղկացած է հինգ ենթագլխից, ուր ատենախոսը քննարկել է պատմական ժամանակի հասկացության զարգացումը VIII-XI դարերում: Սույն գլխում ներկայացված են նոր մեթոդական լուծումներ, որոնք վերլուծվել են բնագրային համեմատության արդյունքում: Այստեղ բացատրված են դժվար մեկնաբանելի և խնդրահարույց հատվածները:

Չորրորդ գլուխը՝ «Ժամանակի ընկալումը XII-XV դարերի հայ եկեղեցական մատենագրության մեջ» վերնագրով, բաղկացած է հինգ ենթագլխից, որոնցում

համապարփակորեն վերլուծության են ենթարկվել պատմական ժամանակի հասկացության ընկալումները XII-XV դարերում: Սույն գլխում ներկայացված են նոր տեսակետներ՝ նոր եզրակացություններով:

Աշխատանքում ներկայացված եզրակացություններն արտացոլում են հեղինակի առջև դրված խնդիրները, սեղմագիրն ամբողջությամբ արտահայտում է ատենախոսության հիմնական բովանդակությունը, իսկ տեղ գտած գլխավոր թեզերն ու դրույթներն ամփոփված են ատենախոսի հեղինակած գիտական աշխատություններում:

3. Հետազոտության իրականացումը և արդյունքները

Ուսումնասիրությունը կատարվել է առաջադրված խնդիրների՝ փաստական հենքի վրա իրականացված քննությամբ: Առանցքային նշանակություն ունեցող հիմնախնդիրները քննարկվել և վերլուծվել են գիտական համապատասխան ձևակերպումներով և պատշաճությամբ: Ըստ այդմ՝ ատենախոսության հեղինակը հմտորեն կատարել է իր առջև դրված խնդիրներն ու համապատասխան քննարկումներ ծավալել: «Եզրակացություններ» բաժնում հեղինակն ընդարձակորեն ներկայացրել է իր կատարած հետազոտության արդյունքները:

4. Աշխատանքի շարադրումը և ձևավորումը

Աշխատանքի շարադրումը և ձևավորումն իրականացվել է առաջադրված պահանջներին համապատասխան և ներկայացվող չափորոշիչների պահպանմամբ: Թեկնածուական այս ատենախոսության շարադրանքի լեզուն սահուն է, հետազոտության նախագծումն ու մեթոդաբանությունը համաչափ են, իսկ կառուցվածքն առանձնանում է կուռ, տրամաբանական և պատճառահետևանքային ազուցվածությամբ:

5. Դիտողություններ և առաջարկություններ: Շեշտադրելով Արուսյակ Ալյոշայի Շիրինյանի ատենախոսության կարևորությունը և առանձնակի գնահատելով հեղինակի կատարած ուսումնասիրությունն ու հայագիտության մեջ բացած էջերը՝ ցանկանում եմ նշել, որ այն այնուամենայնիվ զերծ չէ բովանդակային և տեխնիկական բնույթի թերացումներից, որոնք իհարկե չեն ստվերում հեղինակի կատարած լայնածավալ հետազոտական աշխատանքը և միտում ունեն միայն առաջարկություններ անելու ու բարելավելու հետազոտությունը՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ ատենախոսությունն ունի գիտագործնական, տեսական և ճանաչողական նշանակություն, ուստի հետագայում այն ներկայացվելու է գիտական հանրությանը որպես առանձին

ուսումնասիրություն:

ա. Թեև ատենախոսությունը գրված է գրագետ հայերենով, որոշ դեպքերում տեղ են գտել տեխնիկական և բովանդակամաստային սպրդումներ՝ լեզվառճական անհարթությունների առկայությամբ:

բ. Բովանդակության ցանկում և բուն աշխատանքում չորրորդ գլխի խորագրում դարաշրջանները համաձայնեցված չեն. XI և XII դարերի տարբերություն կա: Բուն աշխատանքի չորրորդ գլխի վերնագրի առաջին ենթագլխում անհրաժեշտություն է առաջանում XI դարը XII դարձնել, իսկ XI դարի ակնարկները կարելի է նախորդ գլխում ներկայացնել:

գ. Կարծում ենք, շահեկան կլիներ, որ երկրորդ, երրորդ, չորրորդ գլուխների խորագրերում միայն հեղինակների անունները ներկայացնելու փոխարեն մասնավորեցվեին և կոնկրետ ենթավերնագրեր ներկայացվեին, հատկապես այն պարագայում, որ ընդհանուր խորագրերը կոնկրետ դարաշրջանների հայ եկեղեցական մատենագրությունն են ներկայացնում, իսկ ենթավերնագրերը հեղինակների ներկայացման սկզբունքով է: Առաջարկում ենք նաև հետագայում հեղինակների դարաշրջանները զուգահեռ ներկայացնել: Վստահ ենք, որ ատենախոսության հեղինակը կարող է ներառել սույն առաջարկությունն իր հետազոտական աշխատանքի հետագա ընդլայնման և բարելավման ընթացակարգերում:

դ.Շահեկան կլիներ, եթե ատենախոսության մեջ որոշ եզրույթներ և ձևակերպումներ հայերեն թարգմանելիս հայերեն ձևակերպումներն առավել հստակ ներկայացվեին: Որոշ եզրեր էլ կարիք ունեն հայացման:

ե. Առաջարկում եմ հետագա վերանայման ընթացքում վերջին գլխի վերջին ենթագլուխը՝ *4.6. Ժամանակի ընկալումը Հայ Եկեղեցու ծիսական ավանդույթում,* տեղափոխել առաջին գլուխ՝ վերջին ենթագլուխ՝ 1.4:

6. Եզրակացություն (աշխատանքը բավարարում է/չի բավարարում ատենախոսության ներկայացվող պահանջները, հեղինակն արժանի է/արժանի չէ տվյալ մասնագիտությամբ աստիճանի շնորհմանը)

Այսպես՝ հրապարակային պաշտպանության ներկայացված սույն ատենախոսությունը միանգամայն համապատասխանում է ատենախոսության ներկայացվող պահանջներին, ներկայացվող նկատառումները առաջարկումների և խորհրդատվական բնույթ են կրում, և լիահույս ենք, որ հետագայում իրենց նպաստը կբերեն սույն գիտական ուսումնասիրության բարելավման գործընթացներում: Այդու՝ հեղինակը՝ Արուսյակ Ալյոշայի Շիրինյանը, լիովին արժանի է գիտական աստիճանաշնորհման անվանացանկի Թ.00.05 -Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ) մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման որակավորման աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետ,
Աստվածաբանության և Հայ Եկեղեցու պատմության ամբիոնի վարիչի
ժամանակավոր պաշտոնակատար պ.գ.թ., դոցենտ Ն. Զ. Միրզոյան

Ստորագրություն_____

Պ.գ.թ., դոցենտ Ն. Միրզոյանի ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ գիտքարտուղար՝ բ.գ.թ., դոցենտ Մ.Վ. Հովհաննիսյան

«29» հունիսի 2026 թ.